ՏԱԹԵՎ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ

# ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎՈՂ ՈՒՍՈՒՑՉԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

**Հետազոտության թեմա՝** Կրտսեր դպրոցականների գեղագիտական դաստիարակության միջոցները

**Հետազոտող ուսուցիչներ՝** Գանջալյան Լաուրա
Մնացականյան Անահիտ
Աբովյանի Կրթահամալիր ՊՈԱԿ

ԵՐԵՎԱՆ 2022

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....3

ԳԼՈՒԽ 1. ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ.....5

1.1.Գեղագիտական դաստիարակության առանձնահատկություններ կրտսեր դպրոցական տարիքում.....5

1.2.Գեղագիտական դաստիարակության միջոցները տարրական դպրոցում .....11

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ.....19

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....20

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

**Հետազոտական աշխատանքի արդիականությունը**

Սովորողի համակողմանի զարգացումը եղել և մնում է մանկավարժության կարևոր խնդիրներից մեկը,որում առանձնահատուկ նշանակություն է տրվում հանրակրթությանը՝ իր գեղագիտական դաստիարակության բաղադրիչով: Գեղագիտական դաստիարակությունը նպատակաուղված է այն կարևոր խնդիրների լուծմանը,որը երեխան կարողանա տեսնել,զգալ,գնահատել գեղեցիկը,կատարյալը,ներդաշնակը,ապրել գեղեցիկ չափանիշներով,իր ներգրավածությամբ գեղեցկացնի շրջապատը:Իրեն շրջապատող աշխարհը և մարդկային հարաբերությունները խորությամբ բացահայտելուն ու ճանաչելուն մեծապես նպաստում է համակարգված և նպատակաուղղված գեղագիտական դաստիարակությունը դեռևս կրտսեր դպրոցական տարիքում:

Սովորողի գեղագիտական դաստիարակությունն իրականացվում է դպրոցում՝ հանրակրթական բոլոր առարկաների ուսումնասիրմամբ,ինչպես նաև արտաուսումնական և արտադպրոցական ժամամակահատվածում:

Հետազոտական աշխատանքի **նպատակը**՝ բացահայտել և գործնականում ներկայացնել ուսումնական և արտաուսումնական գործընթացում գործնթացում կրտսեր դպրոցականների գեղագիտական դաստիարակության մրջողները:

Հետազոտական աշխատանքի ընթացքում առաջադրվել են հետևյալ **խնդիրները**

1. Ու սումնասիրել և վերլուծել կրտսեր դպրոցական տարիքում գեղագիտական դաստիրաակության վերաբերյալ մասնագիտական գրականությունը:
2. Ուսումնասիրել գեղագիտական դաստիարակության իրականացման հնարավորությունները տարրական դպրոցի կրթության բովանդակությունն արտահայտող փաստաթղթերում:
3. Բնութագրել և գործնականում ներկայացնել գեղագիտական դաստիարակոթյան միջոցները և մեթոդները տարրական դպրոցում:

Հետազոտական աշխատանքում կիրառվել են հետևյալ **մեթոդները**՝ հետազոտական աշխատանքի առնչությամբ մանկավարժական, հոգեբանական,

մեթոդական, մասնագիտական գրականության վերլուծություն, դիտում, զրույց, հարցազրույց:

Հետազոտական աշխատանքի կիրառական նշանակությունը՝ տեսական և գործնական հետազոտության նյութերը կարող են օգտակար լինել տարրական դպրոցի գեղագիտական դաստիարակության գործնթաացում:

Հետազոտական աշխատանքի կառուցվածքն ու ծավալը բաղկացած է ներաությունի, բավանդակությունից,եզրակացությունից և օգտագործված գրականության ցանիկից

# ԳԼՈՒԽ 1. ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ

## 1.1.Գեղագիտական դաստիարակության առանձնահատկություններ կրտսեր դպրոցական տարիքում

Մարդը մշտապես ունեցել է գեղեցիկիկը տեսնելու,նրանով հիանալու, ներշնչվելու զգացումը կազմել է նրա հոգևոր աշխարհի մի մասը: Գեղեցիկը հասկացություն է,որը բնութագրվում է իրականության մեջ, արվեստում դրսևորվող գեղագիտական բարձրագույն արժեքը,որին մարդը ձգտել է իրեն և շրջակա աշխարհը ճանաչելու, բացահայտելու ամբողջ ժամանակաշրջանում:

Գեղագիտությունը կամ էսթետիկան (հունարեն՝ aisteticos-զգայությամբ ընկալվող) թեև որպես գիտություն ձևավորվել է միայն 18-րդ դարում (գերմանացի փիլիսոփա Ա. Գ. Բաումգարտենի կողմից 1752թ.), սական որպես իմացության հուզազգացմունքային և գեղեցիկի ճանաչմանն ուղղված ոլորտ գոյություն է ունեցել դեռևս անտիկ շրջանում[1]:

Հին Հունաստանում՝ պյութագորականները, ավելի ուշ՝ Սոկրատեսը, Պլատոնը և Արիստոտելը Մարդը մշտապես ունեցել է գեղեցիկի պահանջը, գեղեցիկը կազմել է նրա հոգևոր կյանքի անքակտելի մասը: Գեղեցիկը բոլոր ժամանակներում համարվել է նաև իրականության կարևորագույն, ամենահետաքրքիր ու զարմանալի երևույթներից մեկը, որի ճանաչումը, իմացությունը եղել է մարդկային գործունեության (ճանաչողության) հիմնական նպատակներից մեկը: Եվ, բնականաբար, գեղեցիկի ձևավորումը բոլոր ժամանակներում եղել է նաև սերունդների դաստիարակության կարևորագույն բաղադրիչ: Գեղեցիկը ճանաչելու, հասկանալու, զգալու, ինչպես նաև գեղագիտական այլ ունակությունների նախադրյալները մարդուն տրվում են ժառանգաբար: Բայց դրանց ձևավորվումը և զարգացումը հիմնականում իրականացվում է սոցիալական ամենատարբեր օղակներում, որոնց մեջ կարևորագույնը, թերևս, հանրակրթությունն է՝ իր գեղագիտական դաստիարակության բաղադրիչով: Իսկ ի՞նչ է գեղագիտական

[1] Մանկավարժություն:Ուսումնական ձեռնարկ բուհերի համար:Կազմեցին՝Լ.Թ.Ասատրյանը,Գ.Հ.Հակոբյանը,Մ.Ա.Ասատրյանը,Մ.Մ.Գևորգյանը,Ն.Զ.Կարապետյանը,Ա.Ա.Բաղդասարյանը, Երևան 2017 էջ 306

դաստիարակությունը[2]: Այստեղ բացակայում է միասնական մոտեցումը, և տարբեր հեղինակների կողմից այն բնորոշվում է տարբեր կերպ. որպես իրականության նկատմամբ մարդու գեղագիտական հարաբերության ձևավորման նպատակաուղղված գործընթաց, որպես շրջակա աշխարհի գեղագիտական ընկալման և գեղեցիկի ստեղծման ունակությունների զարգացում, որպես իրականության նկատմամբ մարդու որոշակի գեղագիտական հարաբերության ձևավորում, որպես անձի հուզազգացմունքային և արժեքային գիտակցության և դրան համապատասխան գործունեության ձևավորման գործընթաց և այլն: Նկատվող այս անհստակության, ոչ միասնական մոտեցման հիմնական պատճառները երկուսն են՝ անհստակությունը և ոչ միասնական մոտեցումը ինչպես գեղեցիկի, այնպես էլ դաստիարակության բնորոշման հարցերում: Գեղագիտական դաստիարակությունը բնության և հասարակության ճանաչողության միջոցներից մեկն է: Նրա նպատակը գեղագիտական մշակույթի ձևավորումն է: Այն հաստատում է իրականության օբյեկտների հետ մարդու գեղագիտական հարաբերությունը, ձևավորում է նրա գեղագիտական զգացմունքները, ճաշակը, իդեալը, գեղեցիկը գնահատելու կարողությունը, ապահովում գեղագիտական ունակությունների, կարողությունների, հմտությունների և այլ որակների զարգացումը, ակտիվացնում, ընդլայնում և բավարարում է գեղագիտական պահանջմունքները, գեղեցիկը ընկալելու և ստեղծագործելու հնարավորությունները: Գեղագիտական դաստիարակությունը ներդաշնակ է դարձնում մարդուն, զարգացնում նրա ստեղծագործական ունակությունները: Գեղագիտական դաստիարակությունը իրականացնում է երկու հիմնական գործառույթ. այն ձևավորում է սովորողի արժեհամակարգի և արժեքային կողմնորոշման գեղագիտական բաղադրիչը և զարգացնում նրա գեղագիտական և ստեղծագործական ներուժը: Այն նաև մարդկային փոխհարաբերությունների կարգավորման միջոց է. մարդը միշտ ձգտում է դեպի գեղեցիկը: Այս տեսակետից դաստիարակության գեղագիտական և բարոյական բաղադրիչները մոտենում են իրար: Ընդհանրապես, գեղագիտական դաստիարակությունը սերտորեն կապված է, ավելին՝ ինչ-որ իմաստով միահյուսվում է ինչպես բարոյական դաստիարակության, այնպես էլ ինտելեկտուալ զարգացման հետ: Այդ կապերին դեռևս հինգերորդ դարում

[2] Հայկական Հանրագիտարան գիրք 2 http://www.encyclopedia.am/pages.php?bId=2&hId=1047

անդրադարձել է հայ պատմիչ և փիլիսոփա Եզնիկ Կողբացին, ով գտնում է, որ մարդու ստեղծած գեղեցիկը պետք է ծառայի բարուն : Գեղեցիկի և բարու փոխհարաբերությունները և համապատասխան արժեքների ձևավորման խնդիրները եղել են բոլոր ժամանակների հետազոտողների ուշադրության կենտրոնում: Որոշ հետազոտողներ հակված են գեղագիտական դաստիարակությունը ներառել բարոյական դաստիարակության մեջ: Հայտնվում է նաև տեսակետ, ըստ որի գեղեցիկը ծառայում է որպես բարոյական դաստիարակվածության մակարդակ: Գեղագիտական դաստիարակության շնորհիվ հնարավոր է դառնում նաև անձի հոգևոր աշխարհի գեղագիտական, բարոյական և ինտելեկտուալ բաղադրիչների միջև լիակատար ներդաշնակության հաստատումը: Կա մարդու բարոյականի վրա գեղագիտականի ազդեցության մի հատուկ տեսակ, որ անվանվում է մաքրագործում (կատարսիս): Արիստոտելը մաքրագործումը կապում է ողբերգության հետ. «Ողբերգական ներկայացումները մաքրագործում են մարդկանց բարոյական աշխարհը. դիտելով ողբերգությունները, ուր ցույց են տրվում ճակատագրով հալածվող մարդկանց տանջանքները, հանդիսատեսը ցավակցության զգացումով է լցվում դեպի տառապյալը, իսկ դա նրան դարձնում է վերին աստիճանի մարդկային, մաքրագործում է նրա հոգին» : Գեղագիտական դաստիարակությունը իրականացվում է բոլոր հասակներում: Եվ ինչքան շուտ է մարդը ենթարկվում նպատակաուղղված գեղագիտական ներգործության, այնքան մեծ է դրա արդյունավետ լինելու հավանականությունը[3]:

Վ.Ա.Սուխոմլինսկին գրում է «Մարդը անջատվել է կենդանիների աշխարհից և դառել օժտված էակ ոչ միայն նրա համար,որ աշխատանքի առաջին գործիքն է շինել իր ձեռքով,այլև նրա համար,որտեսել է կապույտ երկնքի խորությունը, արշալույսի վարդագույն շողքը,արևի ճառագայթի արտացոլումը ցողի կաթիլի մեջ,տեսել է ու հիացել և սկսել է ինքն էլ նոր գեղեցկություն ստեղծել»[4]: Այսպիսով ըստ մեծ մտածողի գեղագիտական դաստիարակության կարևորագույն խնդիրն է աշխարհը ընկալելի դարձնել երեխային՝ տեսնելու հոգևոր հարստությունը,բարությունը, սրտացավությունը և դրա հիման վրա նրա մեջ

[3] Հայկական Հանրագիտարան գիրք 2 http://www.encyclopedia.am/pages.php?bId=2&hId=1047
[4] Սուխոմլինսկի Վ.Ա.Ինչպես դաստիարակել իսկական մարդ Երևան Լույս հրտ. 1979 էջ 388

արմատավորելու գեղեցիկը տեսնելու,լսելու, զգալու և այդ ամենը տեսնել ուրիշների մեջ:

Գեղագիտական դաստիարակությունը նպատակաուղղված է ոչ միային երեխայի մեջ զարգացնելու, ձևավորելու գեղագիտական ճաշակ, գեղագիտական արժեքներ և փոխհարաբերություններ այլև ներառում է մի շար միմյանց փոխկապակցված հասկացություններ՝ գեղագիտական մտածողություն,գործունեություն,ըմբռնումներ և այլն:

«Գեղագիտական դաստիարակության կարևոր խնդիրն է,որ կրտսեր դպրոցականի մեջ զարգանա գեղագիտական ընկալումն ու դիտունակությունը,որոնք և հնարավորություն կտան նրան տեսնելու,ճանաչելու,հասկանալու իրականության հատկությունները՝ գեղեցիկը,վեհըհերոսականը,ողբերգականը,կոմիկական,ու դրանք տարբերելու հակագեղագիտականից՝ստորից հրեշավորից»[5]:

Գեղագիտական դաստիարակության խնդիրներից մեկն էլ աշխատանքի ստեղծագործական արարման նկատմամբ գեղագիտական վերաբերմունքի ձևավորումն է:Այն ենթադրում է՝գնահատում,բավարարվածություն և ստեղագործում գեղեցիկի օրենքներով:Դա աշխատանքի նկատմամբ գեղագիտական հարաբերության առավել ակտիվ ձևն է:Ստեղծագործել գեղեցիկի օրենքներով նշանակում է ստեղծագործել՝ ըստ գեղեցիկի մասին ունեցած պատկերացումների՝[6]: Այսինքն՝ դա նշանակում է գնահատել աշխատանքը գեղեցիկի տեսանկյունից,տարբերակել գեղեցիկ և տգեղ,դիտողի կողմց աշխատանքի արդյունքից ստացած բավականություն է կամ անբավարարված լինելը:

Գեղագիտական դաստիարակության հիմանական խնդիրներից է նաև սովորողի մեջ գեղեցիկի հետ հաղորդակցման միջոցով հաճույքի, բավարարվաության,հիացմունքի,հրճվանքի,զարմանքի և հուզական ուզգացմունքայինդրական այլ ապրումների առաջացումը[7]:

Գեղագիտական դաստիարակությունը սերտ առնչություն ունի նաև «գեղագիտական ճաշակ», «գեղագիտական պահանջմունք», «գեղագիտական իդեալ» հասկացությունների հետ:

---

[5] Բալյան Ա.Ա. Դպրոցականնեչի գեղագիտական դաստիարակությունը, Երևան Լույս հրտ.1979թ. էջ 80
[6] Ներսիսյան Լ.Ս.Գեղագիտական դաստիարակություն համալիր բնույթը Մանկավարական միտք երևան 2000թ. Հ.1
[7] Միքայելյան Հ.Ա. Գեղեցիկ մաթեմատիկական կրթություն. Մաս 2Գեղեցիկ և մաթեմատիկայի կրթական ներուժ Երևան էդիթ Պրինտ 2015թ. էջ 440

«Գեղագիտական ճաշակը գեղեցիկը զգալու գնահատելու, գեղեցիկի տեսանկյունից իրականությունը ընկալելու կոնցիալ-հոգեբանական գնահատական տալու մարդու հոգևոր ընդունակություն է»[8]:Այպիսով գեղագիտական ճաշակը ոչ միայն զգալու տեսնելու,ընկալելու այլև դրա մասի մտածելու,գնահատելու և դատողություն անելու ունակություն է:Սակայն գեղագիտական ճաշակը միշտ չի մնում մեկ մակարդակի վրա.այն զարգանում է,փոխվում,կատարելագործվում:

Իդեալը մարդու պատկերացումն է կատարյալի,ներդաշնակի մասին,դա բարձրագույն նպատակ է, կատարելատիպ: Գեղագիտական իդեալը կատարյալի, ներդաշնակի, գեղեցիկի այն բարձրագույն խտացումն է, որը ձգտում, որոնում է մարդը իր կյանքի ընթացքում, մտովի պատկերացնում կամ բացահայտում:

Գեղագիտական դաստիարակությունը առանձնահատուկ տեղ է գրավում կրտսեր դպրոցականի կյանքում: Այն իրականցվում է հաշվի առնելով վերջիններիս տարիքային ու անհատական առանձնահատկությունները: ՈՒստի կարևոր է դիտարկել տվյալ տարիքին բնորոշ կազմաբնախոսական, նյարդահոգեբանական, իզոլոգիական որոշ առանձնահատկություններ: Ս.Խուդոյանը նշում է,որ ըստ Լ.Ս.Վիգոդսկու՝ /երեխան այս տարիքում սկսում է իմաստավորել սեփական ապրումները,ինչի շնորհիվ փոխվում է նրա վերաբերմունքը սեփական անձի նկատմամբ, ի հայտ է գալիս ապրումների սուր պայքար[9]:

Երեխայի համար նոր դպրոցական իրավիճակը մղում է որոշակի նպատակաուղղվածության,սակայն նրա հետաքրքրությունները շարունակում են մնալ կոնկրետ,մակերեսային ու ցրված:Այսպես, օրինակ՝ նկարն ընկալելիս կրտսեր դպրոցականը ուշադրություն է դարձնում ամենից առաջ նկարում պատկերված դեպքին, ուշադրությունը սկսում են գրավել նկարի մանրամասները:Հաճախ կրտսեր դպրոցականը ուշադրություն չի դարձնում հուզական ընալմանը:Կրտսեր դպրոցականի ուշադրությունը անկայուն է,նրան հոգնեցնում են արվեստի ստեղծագործությունների հետ երկարատև շփումը:

Կրտսեր դպրոցականի մտածողությունը պատկերավոր է,առարկայական,և գեղագիտական դաստիարակությունն այս տարիքում արդյունավետ

---

[8] Մանկավարժություն:Ուսումնական ձեռնարկ բուհերի համար:Կազմեցին՝Լ.Թ.Ասատրյանը,Գ.Հ.Հակոբյանը,Մ.Ա.Ասատրյանը,Մ.Մ.Գևորգյանը,Ն.Զ.Կարապետյանը,Ա.Ա.Բաղդասարյանը, Երևան 2017 էջ 387

[9] Խուդոյան Ս.Ս Անձի զարգացման ճգնաժամային տարիքները, Երևան Զանգակ-97 2004թ. Էջ 43

կիրականանա,եթե այն կապվի դպրոցական կենսափորձի հետ,եթե նրա տեսածտ զգացածը և կատարածը առնչվի գեղագիտական պատկերացումների և գեղագիտական ճաշակի ձևավորման հետ:Ջ.Գյուլյումյանը նշում է,որ այս տարիքում ուսումնական գործընթացը պետք է կազմակերպել՝ օգտագործելով երեխաների ոլոր զգայարանները,ուսոցիչն ավելի քիչ պիտի խոսի,ավելի շատ ցուցդրի,ավելի քիչ կատարի,ավելի շատ մասնակից դարձնի:Սա նշանակում է,որ դպրոցականը առաջին իս օրերից պիտի սկսել աշխատանք երեխանների զգայարանների զգացման և ուսումնական գործընթացում դրանց ակտիվացման ուղղությամբ[10]:

Գեղագիտական դաստիարակությունը իրականանում է բնության մեջ ու հասարակակն միջավայրում,այն չի իրականանում սոսկ դպրոցում:Բայց այն ինչ կատարվում է դպրոցում,կարևոր դեր ունի գեղագիտական դաստիարակության մեջ: «Դպրոցականի կենսամիջավայրի բոլոր բաղադրիչները՝ առարկանները,դրանց համաչափությունները ու գունային ներդաշնակությունը,նաև մարդկային հարաբերությունները պետք է գեղագիտակա ուղղվաություն ունենան»[11]:

Դեռևս մանուկ հասակից գույների և հնչյունների բազմազանության մեջերեխան բացահայտում է շրջապատող աշխանհը.նա զարմանում, ուրախանում է բնության գեղեցկությամբ և իր համար հայտնաբերում գեղեցիկը: Այս առումով Վ.Սուխումսկին դրում է «Բնության գեղեցկությամբ կամ իրադրությամբ զմայլվող 7-11 տարեկան երեխայի հետ շատ հետ է ներգրավել աշխատանքի մեջ: Երեխան սիրում է այն աշխատանքը,որի ընթացքում ստեղվում է ինչ-որ գեղեցիկ,անսովոր բան:Մենք դաստիարակչական աշխատանքները կազմակերպում ենք այնպես,որ կրտսեր դպրոցական տարիքում աշխատանքային գորունեությունը միաժամանակ լինի գեղագիտական գորունեություն»[12]:Սա հիմք է տալիս հավաստելու որ տարրական դպրոցում ուսումնական գործընթացը այնպեսպետք է կազմակերպվի,որ առաջընթացի հետաքրքրությունը,զարգացնի ոչ միայն մտածողությունը, տրմաբանությունը այլև ունենա գեղագիտական ուղղվածություն: «Շատ կարևոր է, որ բնության, խաղի, գեղեցիկի, երաժշտության, երևակայության, ստեղծագորության զարմանալի աշխարհը,որը շրջապատում է երեխային մինճև դպրոց հաճախելը,

[10] Գյուլումյան Ջ.Հայոց լեզվի տարրական ուսուցման մեթոդիկան,Երևան Զանգակ-97 2006թ. Էջ 26
[11] Աթայան Ռ.Աշակերտների գեղագիտական դաստիարակություն Երևան Լույս հրտ. 1974թ. Էջ 45
[12] Сухомлинский В.А. Духовный мир школника М 1960 ст 71

չփակվի երեխաների առջև դասարանի դռնով»: Երեխան միայն այդ ժամանակ կսիրի դպրոցը, երբ նրան հնարավորություն տան ուրախանալու այնպես, ինչպես մինչև դպրոց գալը:

Այսպիսով՝ գեղագիտական դաստիարակությունը կյանքում և արվեստում գեղեցիկի ընկալման,գեղագիտական զգացումների, ճաշակի, պատկերացումների, պահանջմունքների,արժեքների,գեղեցիկի գնահատման կարողությունների ձևավորման գորընթաց է,որն իրականանում է մարդու ամբողջ կյանքի ընթացքում,սակայն առավել համակարգված, նպատակաուղղված իրականացվում է կրթական հաստատություններում:

## 1.2.Գեղագիտական դաստիարակության միջոցները տարրական դպրոցում

Գեղագիատական դաստիարակությունը երեխայի գեղագիտական զգացումների ընկալումների, պատկերացումների, ճաշակի և համոզմունքների ձևավորումն է ներգործման բոլոր միջոցներով, որտեղ կարևոր դեր ունեն բնական ու հասարական միջավայրը, ընտանիքը, դպրոցը՝ կրթական միջավայրով, դասավանդվող առարկաները:

Հանրության մեջ կա այն թյուր կարծիքը, թե հանրակրթական դպրոցում գեղագիտական դաստիարակության խնդիրը պետք է իրականացնել միայն արվեստի կամ էլ առավելագույնը՝ հումանիտար ցիկլի ուսումնական առարկաների միջոցով: Այս կապակցությամբ ժամանակակից ճանաչված ռուս նկարիչ և մանկավարժ Մ. Բ. Նեմենսկին գրում է. «Գեղագիտական դաստիարակության համակարգը նախ և առաջ պետք է լինի միասնական, միավորի բոլոր առարկաները, արտադասարանական պարապմունքները, դպրոցականի հասարակական ողջ կյանքը, որտեղ պարապմունքի յուրաքանչյուր տեսակ գեղագիտական մշակույթի և անձնավորության ձևավորման գործում ունի իր խնդիրը»[13]:

Սակայն ոչ հումանիտար ուսումնական առարկայի ուսուցիչը գեղագիտական արժեքների ձևավորմանը հատկացնում է աննշան տեղ կամ էլ ընդհանրապես չի դիտարկում նման խնդիր, մանավանդ երբ խոսքը վերաբերում է առաջին հայացքից

[13] ՀՀ ԿԳՆ Կրթության ազգային ինստիտուտ գիտամեթոդական ամասագիր,մաթեմատիկան դպրոցում թիվ 4 Երևան 2016թ

գեղագիտությունից ու գեղեցիկից հեռու այնպիսի մի ուսումնական առարկայի, ինչպիսին մաթեմատիկան է: Մինչդեռ հանրակրթական դպրոցի մաթեմատիկայի ուսումնական բնագավառի առարկաները կարևոր տեղ են զբաղեցնում ուսումնական առարկաների ցանկում և, միաժամանակ, ունեն գեղագիտական արժեքների ձևավորման, գեղագիտական դաստիարակության մեծ ներուժ: Այդ խնդրի լուծման համար հիմք են ծառայում մաթեմատիկայի և գեղագիտական արժեքների միջև առկա խորքային կապերը, որոնք դրսևորվում են երաժշտության, նկարչության, ճարտարապետության և արվեստի այլ բնագավառներում մաթեմատիկայի լայն կիրառություններով[14]: Մյուս կողմից, մաթեմատիկան ավելի, քան գիտության որևէ այլ բնագավառ, բավարարում է գիտական գեղեցիկին ներկայացվող պահանջներին: Ավելին, մարդկային խոսքի այնպիսի կարևորագույն տարրեր, ինչպիսիք են հիմնավորվածությունը, տրամաբանական խստությունը և ապացուցվածությունը, որոնք համարվում են գիտական գեղեցիկի օբյեկտիվ հատկանիշներ, իրենց լիարժեք դրսևորումը ստանում են հենց մաթեմատիկայում[15]:

Մաթեմատիկայի ուսուցման գործընթացում գեղագիտական տարրի բացահայտումը ոչ միայն նպաստում է սովորողի գեղագիտական ունակությունների զարգացմանը, այլև թույլ է տալիս ավելի արդյունավետ դարձնել բուն մաթեմատիկայի ուսուցման գործընթացը: Օրինակ, սովորողների տոկունությունը, նպատակասլացությունը, հետևողականությունը կամային այլ որակները լավագույնս դրսևորվում են մաթեմատիկական նյութի և դասավանդման գործընթացի մեջ գեղագիտական բաղադրիչի առկայության դեպքում [16]: Գեղագիտական արժեքների ձևավորման հարցը սերտորեն առընչվում է մաթեմատիկայի գիտական և կրթական բովանդակությունների փոխհարաբերության, մաթեմատիկայի ուսուցման նպատակների, գործառույթների, արդիականացման, մաթեմատիկական օբյեկտների՝ հասկացությունների, թեորեմների, ապացուցումների, խնդիրների ու դրանց լուծման և այլ հիմնախնդիրների հետ:

Հետազոտությունների մի ստվար խումբ զբաղվել է մաթեմատիկայի ուսուցման միջոցով սովորողների և ապագա ուսուցիչների մոտ գեղագիտական արժեքների

---

[14] Հ. Ս. Միքայելյան, Գեղեցիկը, Մաթեմատիկան և կրթությունը, մաս 2, Էդիթ Պրինտ, Երևան, 2015:
[15] Հ. Ս. Միքայելյան, Հանրահաշվի ուսուցման հիմնահարցերը, Երևան, Էդիտ պրինտ, 2003:
[16] Հ. Ս. Միքայելյան, Կամային որակների ձևավորումը և մաթեմատիկական կրթությունը, Մարդ և հասարակություն, 2013, №2:

ձևավորման հարցով: Եղած տեսակետների մեջ Օ. Վ. Չերնիկը առանձնացնում է երկու մոտեցում՝ պասիվհայեցողական և ակտիվգործնական[17]: Նրա կարծիքով առաջինները (Ի. Գ. Զենկևիչ, Վ. Տ. Կովեշնիկով, Վ. Լ. Մինկովսկի) մաթեմատիկայի գեղագիտական ներուժի բացահայտումը հանգեցնում են մաթեմատիկական բովանդակությամբ տարասեռ օբյեկտների ոչ համակարգված ուսումնասիրության, օբյեկտներ, որոնք հեղինակների կարծիքով ունեն գեղագիտական գրավչություն: Նրանք որպես գեղեցիկի հատկանիշ մեծ նշանակություն են տալիս մաթեմատիկական օբյեկտների կիրառական նշանակությանը: Մեծ տեղ տալով գեղեցիկ խնդրին և նրա լուծմանը, այս հետազոտողները չեն բացահայտում դրանց էությունը:

Մաթեմատիկայի միջոցով սովորողների գեղագիտական դաստիարակության համատեքստում կարևոր է թվում արվեստի գործառույթների հետ մաթեմատիկայի գործառութների համեմատությունը: Ուրիշ խոսքով, անհրաժեշտ է թվում պարզել, թե արդյոք մաթեմատիկան և նրա ուսուցման գործընթացը՝ հիմքում ունենալով գեղագիտական մոտեցումների որոշակի համակարգ, կարո՞ղ են իրականացնել մարդու և հասարակության համար արվեստի գործառույթներին համահունչ դրսևորումներ: Ելնելով ասվածից, մենք առաջարկում ենք մաթեմատիկայի ուսուցման գործընթացի միջոցով գեղագիտական դաստիարակության խնդրի համակարգային մոտեցում, որում.

1) Տրվում են մաթեմատիկական օբյեկտների գեղագիտական գնահատման հստակ չափանիշներ՝ մաթեմատիկական գեղեցիկի օբյեկտիվ և սուբյեկտիվ հատկանիշների տեսքով:

2) Մաթեմատիկայի ուսուցման միջոցով գեղագիտական դաստիարակությունը դիտվում է որպես գեղագիտականի շարժուն և անշարժ ձևերի, ընդհատի և անընդհատի միասնություն, որում գիտական գեղեցիկի օբյեկտիվ և սուբյեկտիվ հատկանիշների, մաթեմատիկական օբյեկտների ներքին և արտաքին գեղագիտության հենքի վրա դրսևորվում են գեղագիտական դաստիարակության բոլոր կատեգորիաները, իրենց արտահայտությունը գտնելով սովորողների հուզազգացմունքային ապրումներում:

[17] ՀՀ ԿԳՆ Կրթության ազգային ինստիտուտ գիտամեթոդական ամսագիր, մաթեմատիկան դպրոցում թիվ 4 Երևան 2016թ

3) Մաթեմատիկայի ուսուցման գործընթացում գիտական գեղեցիկի դիրքերից դիտարկվում են. ա. գեղագիտական հիմնական արժեքները, բ. գեղագիտական դաստիարակության կատեգորիաները՝ իրենց փոխադարձ կապի մեջ, գ. գիտական գեղեցիկի և հոգեկան երևույթների փոխհարաբերությունները, մասնավորապես՝ այն հույզերը և զազգացմունքները, որոնք ունեն ընդգծված գեղագիտական երանգներ[18]:

Կրտսեր դպրոցականների գեղագիտական դաստիարակության միջոցները բազմազան են, այն արդյունավետ է իրականանում, երբ երեխան ակտիվորեն է ներգրավվում ուսումնական գործնթացում, դաստողություններ է անում,հնարավորություն ունի շփվել գեղեցիկի հետ, նկարել, ստեղծագործել, երգել և ալն:

Դպրոցում գեղագիտական դաստիարակության միջոցներ են դասը, ուսումնական բոլոր առարկանները, խաղը, ուսումնական աշխատանքը, բնությունը, թատերական արվեստը, ստեղծագործական գործունեությունը, միջոցառումները: Կարևորոգույն միջոց են մեդիատեխնոլոգիաները, ցուցադրական նյութերը,ուսուցչի խոսքը: Առհասարակ շրջակա միջավայրը աշակերտների մեջ ձևավորում են ներդաշնակություն, կենսախինդ տրամադրություն, հաճելի զգացումներ: Կրտսեր դպրոցականների հոգևոր աշխարհի վրա հսկայական ներգործություն է թողնում գեղարվեստական գրականությունը:

Գեղարվեստական դաստիարակության միջոցները հնարավորություն են ընձեռում՝ դպրոցականներին յուրացնել շրջապատող աշխարհի երևույթների առարկաների գեղեցկությունը, զարգանա նրանց գեղագիտական մշակույթն ու գեղագիտական ճաշակը:

Դպրոցում գեղագիտական դաստիարակությունն իրագործվում է ինչպես դասի նթացքում, այնպես էլ դպրոցից դուրս արտադասարանական աշատանքների կազմակերպման ժամանակ: Հաշվի առնելով դպրոցականների տարիքային և ճանաչողական հնարավորությունները՝ տարրրական դպրոցի ուսուցիչը որոնում է գեղագիտական դաստիարակության իրականացման այնպիսի ուղիներ, որոնք

[18] ՀՀ ԿԳՆ Կրթության ազգային ինստիտուտ գիտամեթոդական ամասագիր, մաթեմատիկան դպրոցում թիվ 4 Երևան 2016թ

կօգնեն երեխային ճիշտ ընկալելու գեղեցիկը արվեստում,աշխատանքում,բնության մեջ և առօրյա կյանքում:

Կարևոր նշանակություն կարող են ունենալ արվեստի վերաբերյալ գրքերի ընթերցանությունը,հանճարեղ արվեստագետների կյանքի ու գործունեության ուսումնասիրությունը, դասական երաժշտության ունկնդրումը,պատմվածքների ընթերցանությունը,գեղարվեստական ներկայացումները, կինոդիտումներ, այցելությունները մշակութային օջախներ:Այս ամենը զարգացնում է սովորողի զգայական ընկալումը:Աշակերտը ունկնդրողից և դիտորդից բացի աստիճանաբար հանդես է գալիս նաև ստեղագործողի դերում:

Գեղագիտական դաստիարակության արդյունավետության պայմաններից են նաև դպրոցի և ընտանիքի համագործակցությունը: Որտեղ ընտանիքի և դպրոցի խնդիրները կապված գեղագիտական դաստիարակության հետ հանգում են նույն կետին:/ Ծնողները օգտագերծելով բոլոր հնարավոր մեթոդները և միջոցները ապահովում են երեխայի մոտ գեղագիտական դաստիարակությունը:Ընտանիքում գեղագիտական դաստիարակության մեջ կարևոր նշանակություն ունի նաև ազգային մշակույթը ՝ ազգային և ընտանեկան տոները[19]:Տարրական դպրոցում գեղագիտական դաստիարակությունը իրականացվում է ուսումնական և արտաուսումնական գործընթացները:Գեղագիտական դաստիարակության կարևոր միջոցներից է կրթության բովանդակությունը:Գրեթե բոլոր ուսումնական դասընթացները ունեն գեղագիտական դաստիարակության լայն հնարավորություններ:

Հանրակրթական պետական չարորոշչում ուսումնական բնագավառի շրջանակում հստակ նկարագրված են գեղագիտական դաստիարակությանն ուղղված պահանջները:

Տեխնոլոգիա ուսումնական բնագավառը նպատակաուղղված է «միջավայրը գեղեցիկ և հարմարավետ դարձնող օգտակար իրերի ստեղծմանը, գեղագիտական արժեքների ընկալմանը նգնահատմանը կարողությունների զարգացմանը»:

Տեխնոլոգիա առարկան երեխաներին սովորեցնում է ստեղծագործել, վերաահսկել սեփական աշխատանքը,հասկանալ և ընկալել առարկայական

[19] Խոսք և հաղորդակցություն 2, Մեթոդական ձեռնարկ: Կազմեցին՝
Գ.Թերզյան,Կ.Թորոսյանը,Հ.Խաչատրյանը Երևան Զանգակ հրտ. 2016թ. Էջ 252

աշխարհը,գնահատել շրջապատի գեղեցկությունը,պատրաստել գեղեցիկ և գունագեղ առարկաններ՝պահպանելով չափերը,ձևը,գույն,և ձևավորումը:

Տեխնոլոգիա առարկան միայն գեղագիտական դաստիարակության միջոց չէ, այն երեխաների բազմակողմանի զարգացման հիմքն է, այսինքն՝ գեղագիտական, մտավոր, ֆզիկական և աշխատանքային դաստիարակության գործուն միջոց է: «Կրտսեր դպրոցականների գեղագիտական դաստիարակությունը հիմնականում իրականանում է շինվածքի պատրաստման ժամանակ: Նմուշի ընտրությունը, աշխատանքի պլանավորումը, կառուցվածքի վերլուծություն, գծագրել, նյութերի, գույների ճիշտ ընտրություն, շինվածքի պատրաստման գործնական աշխատանքը, վերամշակում գեղագիտական դաստիարակության միջոց են»:

Երգ-երաժշտությունը,նկարչությունը ևս հնարավորություն են ընձեռնում աշակերտի մեջ արմատավորել գեղագիտական դաստիարակությունը:

Երաժշտության դասը երեխաներին տանում է դեպի մեղեդիների հրաշալի աշխարհ,նրանց մեջ ձևավորում է գեղագիտական զգացողություն, երաժշտական գիտելիքներ,որը ավելի է դյուրացնում երաժշտական նրբերանգների ընկալումը: «Տարբեր ստեղագործությունների ունկնդրման ու կատարման միջոցով երեխաները ևս մեկ անգամ համոզվում են,երաժշտությունը կարող է արտահայտել մարժամանակ տարբեր տրամադրություններ և տարբեր հոգեհուզական վիճակներ՝ երջանկություն,բնության ամենատարբեր երևույթների նկարագրություն, ուրախություն,հուզմունք:Վ.Ա.Սուխումսկինն գրում է /Ձեռը ջութակ վերցնող մարդը չի կարող վատբան կատարել»[20]:

Աշակերտը «Կերպարվեստ» առարկայի սովորում է գործնական աշխատանքով արտախայտել սեփական զգացմունքները, դատողություններն ու գեղագիտական վերաբերմունքը գեղեցիկի նկատմամբ: «Կերպարվեստ առարկայի ծրագրային նյութերից է նաև կազմակերպել դաս-զրույցներ կերպարվեստի,նկարչության մասին և ցուցադրել նկարների վերատպություններ»: Այսպես օրինակ՝ Տարվա չորս եղանակները թեման / գարուն, ամառ,աշուն,ձմեռ/ երեխաներին մղում է դիտել,զգալ բնությունը տարվա տարբեր եղանակներին՝ յուրաքանչյուր եղանակի բնությունը ինչպիսի գունային արտացոլում է ունենում և

[20] Յուզբաշյան Յու.Վ. Փահլևանյան Ա.Ա. Երաժշտություն 1-4-րդ դասարաններում:Ուսուցչի մեթոդական ձեռնարկ Երևան 2001թ էջ 3-4

ինչպես են դրանք հերթագայում: Դիտումների ընթացքում նրանք բացահայտում են թաքնված գեղեցկությունը և համոզվում,որ բնության մեջ ամեն ինչ կատարյալ է: ՈՒսուցչի հատուկ խորհրդով նրանք հատուկ ուշադրություն կդարձնեն բնության գույներին,ձևերին,ձայներին:Շատ է կարևորվում այդ դասերից առաջ կամ հետո էքսկուրսիաների կազմակերպումը:

Այբենարանում ընդգրկված մի շարք թեմաներ և գործնական բնույթի նյութեր ունեն հուղական,գեղագիտական դաստիարակչական ուղղվածություն:

Նախաայբենական շրջանում «Հորինիր մի պատմություն նկարի շուրջ», «Ինչով են նման ինչով են տարբեր», բնույթի առաջադրանքները նպատակաուղղված ենխոսքի, երևակայության զարգացմանը, երեխային մղում է ճանաչելու առարկաների հատկանիշները: Այնպես և նման առաջադրանքները՝նկարելուկներ,նույնատառիկ,բառ բառի մեջ, որ բառերն են ընկերները,շարունակիր՝ մեծ հետաքրքրություն են առաջացնում. Դասը ավելի հետաքրքիր,հաճելի է դառնում,երբ առաջադրանքներն ուղեկցվում են գունագեղ նկարազարդումներով[21]:

Տարրական դպրոցում մայրենի դասագրքում զետեղված նյութերը միտում ունեն ոչ միային գրավիչ ու հետաքրքիր հնարքներով, բազմաբնույթ առաջադրանքներով, զվարթ պատմություններով, խնդուկներով ու բառախաղերով, առածներով ու հանելուկներով իրականացնելու ուսուցողական և դսաստիարակչական նպատակներ,այլև բանավոր և գրավոր խոսքի միջոցով ուսուցումը դարձնելու արագ,հեշտ ու արդյունավետ,երեխաներին մղելու տեսնելու գեղեցիկը, բարին, զարգացնել դրանք գնահատելու կարողությունները:

Գեղարվեստական գրականությունը անմիջականորեն կապված չէ բնության հետ,սակայն գրականության ուսուցման միջոցով հնարավոր է աշակերտի համար տեսանելի դրձնել՝ բնության գեղեցկությունները ինչ նրան ճանաչելի է դարձնում, ոչ միայն գրական ստեղագործության ընթերցելու միջոցով այլև ընկալման ու գնահատման միջոցով[22]:

Տարրական դպրոցում մայրենիի դասագրքում մեծ տեղ են գրավում բազմաբնույթ խաղերը, որոնք դասերի ընթացքում աշակերտներին առավել ակտիվ

---

[21] Սարգսյան Վ.Ա.Այբենարան: Մեթոդական ձեռնարկ: Երևան 2006թ էջ 15

[22] Պապիկյան Կ.Գեղագիտական դաստիարակությունը տարրական դպրոցում Մանկավարժություն գիտամեթոդական ամսագիր ԿԱԻ հ8 2012թ՛ էջ 12

ներգրավվելու համար են:Օրինակ՝ շուտասելուկների կիրառումը լուծում է ուսումնական,դաստիարակչական,գեղագիտական մի շարք խնդիրներ: Դրանք նպաստում են երեխաներին ուսումնական խաղերի օգնությամբ նոր գիտելիքների հաղորդմանը,աշակերտներին հնարավորություն է ընձեռվում ստեղծագործաբար կիրառել իրենց գիտելիքները,ճանաչել ընկերների խաղային դրսևորումները և գեղագիտորեն ընկալել խաղի բովանդակությունը:

Գեղագիտական դաստիարակության մեթոդներ ու միջոցներեն անձնական օրինակը,երկխոսությունը,դպրոցական պարապմունքները, զարգացման կենտրոնները, էքսկուրսիաները, այցելությունները թանգարաններ, թատրոններ, պատկերասրահներ, փառատոններ: Շատ կարևոր է ուսուցչի անձնական օրինակը: Նա երեխայի՝աշակերտի գիտակցությունում ձևավորում գեղագիտական իդեալ:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Կրտսեր դպրոցական տարիքում գեղագիտական դաստիարակությունը լուծում է մի շարք խնդիրներ՝ գեղեցիկը տեսնելու, ճանաչելու, ընկալելու, գնահատելու կարողություն, աշխարհի նկատմամբ գեղագիտական վերաբերմունքի ձևավորումը, դիտունակության զարգացում, գեղեցիկի հետ հաղորդակցման միջոցով հուզական ապրումների առաջացում:

Գեղագիտական դաստիարակության գործընթացում պետք է հաշվի առնել կրտսեր դպրոցականների տարիքային առանձնահատկությունները՝ պատկերավոր մտածողությունը, հետաքրքրությունը, ուշադրությունը, հուզականությունը, դրդապատճառները, ուսումնական գործընթացի բնույթը և առանձնահատկությունը, ինչպես նաև կենսամիջավայրի բաղադրիչները, դաստիարակողի ներգրավաության մեթոդները, միջոցներն ու ձևերը:

Տարրական դպրոցում գեղագիտական դաստիարակության միջոցներ են ուսումնական առարկաների բովանդակությունը, արտադասարանային միջոցառումները, խաղ-մրցույթները, էքսկուրսիաները բնության ևմշակութային օջախներ, մեդիատեխնոլոգիաները և այլն:

## ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1Աթայան Ռ.Աշակերտների գեղագիտական դաստիարակություն Երևան Լույս հրտ. 1974թ

2Բալյան Ա.Ա. Դպրոցականնեչի գեղագիտական դաստիարակությունը, Երևան Լույս հրտ.1979թ.

3Գյուլումյան Ջ.Հայոց լեզվի տարրական ուսուցման մեթոդիկան,Երևան Զանգակ-97 2006թ

4Խոսք և հաղորդակցություն 2, Մեթոդական ձեռնարկ: Կազմեցին՝ Գ.Թերզյան,Կ.Թորոսյանը,Հ.Խաչատրյանը Երևան Զանգակ հրտ. 2016թ.

5Խուդոյան Ս.Ս Անձի զարգացման ճգնաժամային տարիքները, Երևան Զանգակ-97 2004թ

6Մանկավարժություն:Ուսումնական ձեռնարկ բուհերի համար:Կազմեցին՝Լ.Թ.Ասատրյանը,Գ.Հ.Հակոբյանը,Մ.Ա.Ասատրյանը,Մ.Մ.Գևորգյանը,Ն.Զ.Կարապետյանը,Ա.Ա.Բաղդասարյանը, Երևան 2017

7Հ. Ս. Միքայելյան, Գեղեցիկը, Մաթեմատիկան և կրթությունը, մաս 2, Էդիթ Պրինտ, Երևան, 2015:

8Հ. Ս. Միքայելյան, Հանրահաշվի ուսուցման հիմնահարցերը, Երևան, Էդիտ Պրինտ, 2003:

9. Հ. Ս. Միքայելյան, Կամային որակների ձևավորումը և մաթեմատիկական կրթությունը, Մարդ և հասարակություն, 2013, №2:

10.Յուզբաշյան Յու.Վ. Փահլևանյան Ա.Ա. Երաժշտություն 1-4-րդ դասարաններում:Ուսուցչի մեթոդական ձեռնարկ Երևան 2001թ

11.Ներսիսյան Լ.Ս.Գեղագիտական դաստիարակություն համալիր բնույթը Մանկավարական միտք երևան 2000թ. Հ.1

13.Պապիկյան Կ.Գեղագիտական դաստիարակությունը տարրական դպրոցում Մանկավարժություն գիտամեթոդական ամսագիր ԿԱԻ հ8 2012թ՝

14. Սարգսյան Վ.Ա.Այբենարան: Մեթոդական ձեռնարկ: Երևան 2006թ

15. Սուխոմլինսկի Վ.Ա.Ինչպես դաստիարակել իսկական մարդ Երևան Լույս հրտ. 1979

16.Հայկական Հանրագիտարան գիրք 2

http://www.encyclopedia.am/pages.php?bId=2&hId=1047

17. ՀՀ ԿԳՆ Կրթության ազգային ինստիտուտ գիտամեթոդական ամսագիր, մաթեմատիկան դպրոցում թիվ 4 Երևան 2016թ

https://tert.nla.am/archive/NLA%20AMSAGIR/Matematikan%20dprocum/2016(4).pdf

18. Сухомлинский В.А. Духовный мир школника М 1960 ст 71